



ընտրվող եպիսկոպոս է:

Այս երկու գլխավոր բարեկարգություններու վրայ որոնք սոսկ եկեղեցականք են, երրորդ մ'ալ առեկընեկ կը պարտադրին, զորն որ խառն իրաւունք պիտի կոչենք, որ կրօնական և միանգամայն քաղաքական է: Հռչակաւոր Արեւելեան եկեղեցիք Օսմանեան կառավարութեան ներքե կայրին, այսինքն ոչ Քրիստոնեայ Տէրութեան, և ինչպէս դարեւ առաջ, ասանկ ալ հիմայ աշխարհակալ իշխանութեան ներքե նուաճեալ ժողովրդոց վիճակը ունին:

Երբոր Սուլթանները սոյն երկիրներուն տիրեցին, Քրիստոնէութիւնը բաժանեալ գտան կերպ կերպ արարողութեանց և դանաղան աղանդից ամենքն ալ զՔրիստոս ընդունողք, բայց ոչ ամենքն ալ կաթողիկէ հաւատքը դաւանողք, մասնաւոր մեծ թիւ մը ի կաթողիկէ միութենէ բաժանեալ ի պատճառահերձուածոյ, այսինքն է Հռոմայու եպիսկոպոսը միանգամայն կաթողիկէութեան ծայրագոյն առաջնորդը ընդունողք:

Արեւմտ սոյն տիրապետութեան ժամանակները Արեւելքի մէջ չկը դուռնաէին շատ մը զանազան և հակառակ եկեղեցիներ, կային հերետիկոսներ, որոնք կաթողիկէ եկեղեցւոյ վարդապետութեանց զոմանս կուրանային հին հերետիկոսութեանց մնացորդներ, կային հերձուածողներ, որոնք Հռոմայու եպիսկոպոսը միանգամայն կաթողիկէ նախագահը չէին ճանչնար: Վերջապէս կային կաթողիկէայք, որոնք միաբնակ էին ի հաղորդութեան Հռոմայ եպիսկոպոսին և ընդհանուր եկեղեցւոյ քահանայապետին հետ, ուստի կը ճանչնային անոր նախագահութիւնը:

Բայց կաթողիկէ որ նոյն է ուղղափառ եկեղեցիները երկու տեսակ էին, վաղեմիք որոնք դարերէ ի վեր հաստատեալ արարողութիւնը կը պահէին, որով և Արեւելեան եկեղեցւոյ անուամբ արդէն ծանօթ էին: Դարձեալ ոչ այնպիսի վաղեմիք, Արեւմտեան արարողութեանց կը հետեւէին, այսինքն է Լատինացի կամ որ նոյն է Հռոմայ եկեղեցւոյն: Այս վերջիններուն Արեւելքի մէջ գտնուելը Լատիններուն Տիրապետութենէն առաջ եկաւ խաչակրութեան պատճառաւ, Ստոնք ուրիշ եկեղեցեաց պէս իրենց եպիսկոպոսները, Պատրիարքները ունեցան, բայց մէջերնին շատ մեծ տարբերութիւն կար: Բաց ի ծէսից (որովհետեւ Լատին լեզուաւ կը վարվէին և Արեւմտացի սեփական արարողութեանց ձևերով այլազգ կը կազմէին իրենց եկեղեցական իշխանութիւնը, վասն զի մինչդեռ վաղեմի Արեւելեան եկեղեցիք ընտրութիւններն զգրեով և ժողովրդեամբ կը կատարէին, Լատինք քահանայապետական վճռոց գործերը իրենց օրէնք ընդունելէն, որով ամեն բան Հռոմայ եպիսկոպոսին անտընտրելի միջամտութեանը կը կարօտէր, որ միանգամայն Լատինացի կամ Արեւմտացի Պատրիարքն է, և ընդհանուր եկեղեցւոյ չափազանց է:

Լատիններուն Տիրապետութիւնը վեր ի վար տապալելէն յետոյ (կոստանդնուպոլսոյ մէջ, 1282ին, Երուսաղիմայ մէջ 1291ին: Ստամբուլ և Տրապիզոն մէջ, 1289ին, այս վերջինները Տաճկաց ձեռքը անցնելով, մինչդեռ կոստանդնուպոլսոյ Բոսնաց կը դառնար): քահանայապետները փորձեր չթողցին որ չընեն իրենց աղբեցութիւնը պահպանելու համար Արեւելքի մէջ որ ստացած էին խաչակրաց և

Լատինայ Տիրապետութեան պատճառաւ:

Քահանայապետաց այս ջանքը սոսկ կրօնական չէր, խաչակրաց խրախուսիչները իրենք եղած էին, և ետ կեանքով միաբնակ չունէին, ուստի Տաճկաց կողմանէ անհաշտ թշնամութիւն և կոստանդնուպոլսոյ Բոսնաց կայսերաց կողմանէ նախանձու թշնամութիւն: Տաճիկները Հռոմէական եկեղեցւոյն նկատմամբ բնաւ թողնուութիւն չէին ուզեր ընել, ուստի կարտաքսէին Լատինաժէս կաթողիկէները, իսկ Հռոմ գեռ կը շարունակէ եպիսկոպոսներ անուանել, յուսալով որ օր մը կարող պիտի ըլլայ անոնց ամբողջութեամբ ձեռք բերելու: Կանուանէ նոյնպէս Լատին ծէսի Արեւելեան կողմները ևս և Պատմութիւններ, որոնք կողմանց անհաւատից կոչուեցան և կը կոչուին:

Իսկ կոստանդնուպոլսոյ Բոսն կայսերաց վրայ խոսելով, ասանց ընդգրկութիւնը որչափ ալ Տաճկաց պէս յայտնի անողբերելի չեղաւ, ի վերայ սոյն ամենայնի պակաս ալ չէր, թէ և ծածկել կը կեղծէին: Այս ոչնչութեան հասած կտորներով աղէկ կիմանային, թէ կարօտ են Արեւմտացի օգնութեան, թէ Բաբելը որոնք որ գեռ խաչակրութեան կիրքով լեցուն էին Տաճկաց դէմ, կրնային իրենց ձեռքնուր ըլլալ: ուսկից յառաջ կուգար քաղաքական կրօնական տրամադրութիւն մը Հռոմայ քահանայապետաց բարեկամութիւնը չափելու համար: Բայց միանգամայն չէին մոռնար Լատինացեաց զիրենք կոստանդնուպոլսոյ գահէն զրկելը, և այս պատճառաւ ծածկաբար բայց սաստիկ ատելութիւն ունէին Արեւմտացի դէմ:

Մարդկանց այս տրամադրութիւնը ապացոյց է երկուց եկեղեցեաց ցուանաց և Լատինաց միութեան համար շատ անգամ եղած փորձերուն պարտիւն մնալը, հերձուածը դադարելով ալ, Արեւմտեան զանազան ժողովքներուն մէջ և մասնաւորապէս ի ժողովք փորձերուն Հռոմայ քահանայապետին առաջնութեան վարդապետութիւնը յորինելու համար ծագած մեծամեծ դժուարութիւններն ալ նոյն կը հաստատեն: Հռոմ Արեւմտեացի դուրս կեցած աչքը տրեկեր էր Արեւելեան եկեղեցիները կըլլելու մինչդեռ ասոնք խիստ նախանձախնդիրք իրենց վաղեմի կաղնութեան և բարեկարգութեան և ծիսից, ևս քան զիս այս ընկրկման դէմ կը մարառէին, և փորձերուն վճռոյն ուրիշ կերպ չէին հաւաներ եթէ ոչ, «անառատ մնալով բոլոր արտօնութիւնները և իրաւունքները Արեւելեան Պատրիարքաց, իսկ առաջնութեան և անոր պաշտամանը գործածութեանը համար կրնողակին մէջ ըստեցաւ, «ըստ այնմ տարագրու, որ աւանդեալ է ի գործս տիեզերական ժողովոց և ի Սուրբ կանոնս»:

Իրաւունքներու պիտի ալ Տաճկաց ձեռքը անցաւ, և քահանայապետները ամենայն զօրութեամբ կաշխատէին ընդդէմ յարձակող զօրութեան Տաճկաց հանդիսականներու: Սուլթանները յարմար գտան յառաջ տանել իրենց հին և արդէն աւանդեալ քաղաքականութիւնը, ուստի արդիւնեցին Լատին ծէսի կաթողիկէ կրօնը, արտաքսեցին իրենց Տէրութեան եպիսկոպոսները Արեւելեան կողմները և Պատրիարքները: Բայց Հռոմ պահեց զանոնք և կը պահէ անուամբ «կողմանց անհաւատից»:

Տաճկական Տէրութիւնը ուրիշ կերպ վարուեցաւ Արեւելեան ծիսի ե

կեղեցեաց հետ: Եթէ Լատինայ կըլլան և եթէ ոչ, բնականաբար աս խորհուրդը առաջնորդ ունենալով, եթէ անոնց գլխավորներ, ծէսը և բարեկարգութիւնները յարգելով հաւատարիմ հպատակներ կունենայ: ուստի ոչ միայն չը նեղեց զանոնք, այլ ճանչցաւ ալ քաղաքականապէս, կամ թէ ինչպէս կըսենք օրինական կերպով և ինչպէս բարբարոս պետութեանց կառավարութիւնն է քաղաքական գոյութիւնը կրօնի և դաւանութեան գոյութիւններովը նոյնացոյց, որով զանազան եկեղեցիք (կաթողիկէայ կամ ոչ) ազգք ըսուեցան, և այսպէս մէկը մէկէ տարբեր եղան կաթողիկէ անուամբ, կամ ոչ, ըստ այսոյ անուանակոչութեան մեր թիւերովները շատ անգամ հանգիսեցան, որով նշանակած ենք երկու հարիւր հազարի չափ եղող կաթողիկէ Հայերը, որոնք այսօր Հռոմայու հետ վիճաբանութեան մէջ են:

Քանի որ Տաճիկները ահաւոր էին, Արեւմտացի ամենեւին դէմ չըլլէին, բայց երբ այն գոռոզ յաղթականները տկարութեան մէջը ինկան, Արեւմտացի սկսան իրենց զգեստի տակ քաղաքական աղբեցութեան փորձեր ընելու: Երկու Տէրութիւնը յատկապէս աս բանիս մէջ երևան ելան, Ռուսիա Արեւելեան յունաժէս հերձուածողներուն համար, և Գաղղիա կաթողիկէայ մասնաւոր ի մասնաւոր ի Արեւմտեան կամ Լատին ծէս ունեցողներուն համար:

Հռոմայու վարչութիւնը որ բնաւ երբեք յուսակաւոր չըլլար, և իրեն մտածմունքները ամենեւին ետք չէր գէր, անգամ մի կանկ առած սկսաւ նորէն Արեւելեան եկեղեցիները Լատինացեաց գործքը և ինչպէս որ ամեն անգամ յաջող կանխատես է, Արեւմտեան Տէրութեան մէջ յաջողութեամբ բոլոր գործերով, մասնաւորապէս Գաղղիոյ, ետ չգեց բռնած ճամբան և ամենեւին առիթ չիտալացոյ իր յատուկ նոր իրապետական զօրութիւնը հաստատելու համար:

Լատին եպիսկոպոսները, Արեւելեան կողմները և Պատրիարքները ուղղակի քահանայապետէն կանուանուին առանց ժողովրդեան կամ կրօնական հասարակութեան մասնակցութեան, մինչդեռ բոլորովին հակառակ ճամբով կանուանուին և կընտրուին Արեւելեան ծէսները: Տարբերութիւն խիստ զգալի տարբերութիւնները արդեօք զօրաւոր արդեւ չեն ըլլար ըստին գաղափարներու և ձևերու հաստատութեան: Հիմալ որ Եւրոպայի մէջ ամեն բան ժողովրդեան իրաւանց կը դառնայ, վտանգաւոր չէ՞ արդեօք Հռոմէական կեղծութեան կանուանութեան: որ քահանայապետական վերաբերման տակ կուզէ տիրապետել:

Բայց Հռոմայ վարչութիւնը, և Յիսուսեանց և Բրոքլանտայի ազգեցութիւնը, որ մեր մէջը կաթողիկէայ եպիսկոպոսներուն տեղ փոխանակեցին, իրենց վախճաններուն դէմ ինչպէս պիտի հասնին, ըստ հին առաջին, «բաժանեալ զի տրեցեցես»: Արեւելեան մէջ կողմնակցութիւն մը հանել, որոնց Արեւմտեան ծէսը, և բարեկարգութիւնը հաճող ըլլար, ետքը ըստ ժամանակին պատուաւոր մը գըտնալ, որ մեծնալ ու գըտնալ, իր հասարակութեան մէջ իրեն յարմար ունեցող բաղնիքին չը դառնալով ուղեւայ Արեւմտեան բանասրկութեան գործիք ըլլալ, և ուղղակի Բաբել կողմանէ աւաղութեան հանել, որ փառասեր

ները մեծցնելու ձեռնառութիւն մի է:

Ոմանք թերեւս ակուաններն կըրճտեն: Բայց թշնամաց բարկութեանէն չ'փախալու վարժ ըլլալովիս, առանց մարդկային անհաճութեան կըսենք: Եթէ այս է հարազատ պատմութիւն կաթողիկէ Հայոց խնդրոյն, և Գրեհ. Հասունին, և Իվէրսոնի կողմակին, որուն ձեռքով յուսացուեցաւ կաթողիկէ Հայոց Արեւելեան եկեղեցին այլափոխել, մոցնելով զուր քահանայապետական ընտրութիւնը և սահմանադրութիւնը, փոխանակելով հին բարեկարգութեան տեղ: Գոյով կըրը և ժողովրդը կը մասնակցէին ընտրութեան:

Ընդհանրապէս այս է Գաղանճեան գերապայծառն զբոլորին մէջ տիրող իմաստն ալ, որ կանոնական իրաւունքը ձեռք առնելով խօսքը Հռոմայ եպիսկոպոսին իրաւաբանական զանազանութեան վրայ կը հիմնէ, որն որ կը նկատուի, եթէ իբրեւ Պատրիարք, և եթէ իբրեւ Բաբել ընդհանուր եկեղեցւոյ, կը ծանուցանէ թէ Հռոմայ եպիսկոպոսին այսպիսի միջամտութիւնները յորս բարեկարգական, Պատրիարքութեան վերաբերեալ են և ոչ Բաբելութեան: և դառնալով առ Արեւմտեան մասնաւոր թէ Հռոմայ յու եպիսկոպոսին գրեթէ այսօրինակ կը խօսի սպաժառ և բացայայտ: Թէ ինքը իբրեւ Լատին Պատրիարք բնաւ չը կրնար խառնվիլ ուրիշ Պատրիարքներուն իրաւանց և գործածութեանց մէջ, թէ այսու նկատմամբ ինքն ալ հաւասար է: Արեւելեան ծիսի Պատրիարքներուն, ոչ մեծութեան ունի, որով և ոչ իրաւունք խառնուելու: Եւ որով այսօրեւրոն վրայ գերապայծառ Գաղանճեանը կը ծանուցանէ եթէ ինքը և իւր համախոհները Հռոմայ եպիսկոպոսին, իբրեւ Նախագահ, կաթողիկէ եկեղեցւոյ իշխանութիւնը և օրինաւոր իրաւունքները կը ճանչնան, և նուազութիւնը չեն ուզեր: Բայց կաթողիկէ առաջնութեանը վրայ փութեմուն ժողովքի որդողութիւնը հաստատուն կը պահեն: ուստի շատ անգամ երկրորդելով կը կրկնեն, թէ այդ Արեւելեաններէ ճանչցուած է և ընդունուած, բայց անարատ մնալով Արեւելեան Պատրիարքաց ամեն արտօնութիւնները, և իրաւունքները, գործածութիւնն ալ պէտք է ըլլայ, ըստ այնմ տարազու որ աւանդեալ է ի գործս տիեզերական ժողովոց և ի սուրբ կանոնս:

Արդեօք գրեցնելին հնչեալը Հայ Արեւելեան կողմները իրաւունք ունի՞ ձըլմարտութիւն խօսելու վարժած ըլլալովիս, համարձակ պատասխան կուտանք թէ այո, ունի: Եւ այս մեր դատողութեան պատճառն ալ կը նշանակենք, որն որ ըստ մասին անհաճ տարիններուն յօդուածներուն մէջ պարզուած էր, ըստ մասին ալ ներկայ տարւոյ մէջ պիտի պարզուի: Հռոմէական կաթողիկէ եկեղեցւոյն թշնամութիւնները արդեամբ կը հոսին մէկ աղբիւրէ մը, որ գուցէ միմիայն և գրեաւորապէս, այսինքն թէ անյաբուրդ բազմաթիւ մը ամեն բանը Հռոմէական վարչութեան մէջ պարփաւ կը և ընկղմու և ամենքը ևս և կատարած այն հաստատութիւն ունենան, կամաւորաբար կան և կամ կանոնական իրեն պարզ գործիք ընել և գերի ճիշդ ըստ առաջին «գրեալացնան»: Արդեօք Քրիստոս այսպէս հաստատեց: Առաքեալք այսպէս գործեցին, շատ դաւերեք ի վեր անըծելի զրահին ներքե այս է պատասպարածը:

(Երեսնամեակ)



